Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1022[1]-13.06.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (Օրենսգրքի) 193-րդ հոդվածի «պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:» բառերը փոխարինել «պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
ՀՀ կառավարություն	**Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող Օրենքի 3-րդ հոդվածի 2 –րդ մասում 2.2) կետի փոխարեն գրել 2.2.-րդ մաս:**	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը**
ՀՀ կառավարություն (պատգամավոր պարոն Գ. Ջհանգիրյանի հետ համատեղ քննարկման արդյունքում)	Նախագծում լրացվող նոր 2.1 գլխի 15.2.-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ նախադասությունները խմբագրել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. *Դիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կառավարիչ է*	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:**

	նշանակում կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված թեկնածուին:		
ՀՀ կառավարություն (պատգամավոր պարոն Գ. Ջհանգիրյանի հետ համատեղ քննարկման արդյունքում)	**Նախագծում լրացվող նոր 2.1 գլխի 15.7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «գերակայություն» բառից հետո ավելացնել *սույն օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին համապատասխան:***	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը:**
ՀՀ կառավարություն (պատգամավոր պարոն Գ. Ջհանգիրյանի հետ համատեղ քննարկման արդյունքում)	**Նախագծի 31-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ նախադասությունում «ստացած» բառից առաջ ավելացնել «գործունեությունից» բառը, իսկ «զուտ եկամուտներից» բառերի փոխարեն գրել «զուտ շահույթից (զուտ եկամուտ)» բառերը:**	**Ընդունվել է:**	**Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները և նախագծի հիմնավորումներում անդրադարձ է կատարվել «զուտ շահույթ» տերմինի մեկնաբանմանը:**